

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՆՇԱՆԵԱՆԻ

Մեսրոպ Արք. Նշանեան (1872-1944) էական ու առաձնայատուկ տեղ կը գրաւէ Սըրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ ընդհանրապէս Հայց. եկեղեցւոյ Ի դարու հոգեւոր եւ մտաւորական դաշտին վրայ: Ո՛չ միայն պատրիարք ու բազմավաստակ լուսարարապետ, այլ Ս. Աթոռի մտքի ու լոյսի փարոսներուն՝ ձեռագրատան, տպարանի, վարժարաններու երկարամեայ վարիչը, ան ո՛չ միայն արտադրեց, հեղինակեց, հրատարակեց, այլեւ իր պատրաստակամ օժանդակութեամբ ու ծառայասիրութեամբ նիւթ մատակարարեց իրեն ժամանակակից հայագէտներուն, հրատարակիչներուն՝ բերելով իր ծանրակշիռ նպաստը բանասիրութեան բնագաւառին, բայց միշտ մնալով բեմի ետին, շուրջի տակ, գործելով համեստութեամբ, անշահախնդիր ջանասիրութեամբ:

Ներկայ մատենագիտութիւնը, որ երբեք չի ձգտիր ունենալ ամբողջական ըլլալու յաւակնութիւնը, նպատակ ունի համախմբելու գրական, բանասիրական, թարգմանական այն ամբողջ վաստակը, որու հեղինակն է Մեսրոպ Արք. Նշանեան՝ թէ՛ յայտնի ստորագրութեամբ, թէ ծածկանունով եւ կամ անստորագիր գրութիւններով: Այս փորձը դասակարգուած է ըստ բնոյթի՝ իբրեւ բանասիրական, թարգմանական, հայագիտական ու գրական գիրքեր ու յօդուածներ: Այնու ամենայնիւ հարկ կը համարենք նշել հետեւեալ պարագաները:

Մեսրոպ Արք. Նշանեան տարիներ շարունակ, նոյնիսկ պատրիարք ընտրուելէ ետք, մինչեւ իր վախճանումը կազմած է Երուսաղէմի Հայ պատրիարքութեան եկեղեցական օրացոյցը (1928, 1930, 1931, 1932, 1933, 1934, 1935, 1936, 1937, 1938, 1939, 1940, 1941)¹: Օրացոյցներն ու անոնց մէջ տեղ գտած անստորագիր եկեղեցական մանր գիտելիքները թէեւ իրեն չվերագրելու պատճառ մը չունէինք, սակայն նախընտրեցինք դուրս ձգել մատենագիտական ցանկէն: Յիշեալ ակնարկները կը բերենք աստ, անշատապէս. «Տոմարական գիտելիքներ», 1934, էջ 147-156, «Կարգ ժամասացութեան», 1936, էջ 185-196, «Տօնացոյցի վերաբերեալ գիտելիքներ», 1937, էջ 195-207, «Նշանաւոր դէպքեր հայկական անցեալէն», 1939, էջ 206-243, «Ժամանակագրութիւն Պաղեստինի եւ Հայ-Երուսաղէմի», 1940, էջ 199-239, «Տարուան տասներկու ամիսները», 1941, էջ 202-219:

Մատենագիտութենէ դուրս ձգած ենք Մեսրոպ Արք. Նշանեանի տակաւին անտիպ մնացող եւ ձեռագրատան մէջ պահուող աշխատութիւնները, որոնցմէ զլիւսւորն է անշուշտ թիւ 3864 ձեռագիրը²՝ «Նկարագրութիւն 52 գրչագիր Աստուածաշունչներու» խորագրով: Վիեննական Միխիթարեան միաբանութեան անդամ, անխոնջ բանասէր Հ. Ներ-

¹ Ձեռագրատան թիւ 3887 ձեռագիրը 1916-ի եկեղեցական օրացոյցն է, զոր նոյնպէս կազմած է Մեսրոպ Վրդ. Նշանեան (տե՛ս Ն. Արք. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, Կ. ժԱ, Երուսաղէմ, 1991, էջ 332-334): Երուսաղէմի տպարանը 1915-ին փակուած ըլլալով, 1916-ի օրացոյցն ալ մնացած է անտիպ:

Աստ կ'ուզենք նշել, որ 2011-ին Երեւան հրատարակուած Անահիտ Մուրատեանի «Երուսաղէմի հայ տպագիր գրքի մատենագիտութիւն (1833-1996)» արժէքաւոր հատորին մէջ (էջ 70) 1911-ի եկեղեցական օրացոյցի պատրաստութիւնը եւս վերագրուած է Մեսրոպ Վրդ. Նշանեանի, որ այդ շրջանին դեռ չէր վերադարձած Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, ուր գացած էր որպէս անձնական փառապաշտ Մատթէոս Բ կաթողիկոսի:

² Ն. Արք. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց, Կ. ժԱ, Երուսաղէմ, 1991, էջ 310-312:

սէս Վրդ. Ակինեանի (1883-1963) ուղղեալ 11 Յուլիս 1935 թուակիր նամակի մէջ³ Մեսրոպ Արք. Նշանեան գրած է, որ «Աստուածաշունչ»ի թարգմանութեան 1500-ամեայ յորելեանին առթիւ ձեռնարկած է ցուցակագրել Երուսաղէմի մատենադարանի ձեռագիր «Աստուածաշունչ»ները: Իր փափաքը եղած է առանձին հատորով մը լոյս ընծայել այս աշխատութիւնը, որ չէ իրականացած դժբախտաբար:

Ձեռագրատան մէջ ի պահ կը մնայ նաեւ Մեսրոպ Արք. Նշանեանի օրագրութիւնը, որ կ'ընդգրկէ 1919-էն 1927 երկարող ժամանակի անցքերը՝ «Օրագրութիւն» ընդհանուր խորագրով, թիւ 3746 (1919-1921), թիւ 3747 (1922-1923), թիւ 3748 (1924), թիւ 3749 (1925-1927)⁴: Մեսրոպ Արք. Նշանեանի օրագրութեան վերաբերեալ պէտք է նկատենք, որ անկէ հատուածներ հրատարակուած են «Սիոն»ի մէջ, 1991-էն սկսեալ մինչեւ 1994 թուականը: Այդ հատուածները, որոնք կը պատմեն 1917-1919 ժամանակաշրջանի անցքերը, քաղուած ըլլալու են ձեռագրէ մը, որու մասին տեղեկութիւններ կը բացակային ձեռագրաց մատենադարանի հրատարակեալ ցուցակներուն մէջ:

Ձեռագրատան մէջ կարելի է տեսնել Մեսրոպ Սրբազանի մեքենագրեալ ինքնակենսագրութիւնը եւս (թիւ 3750⁵), դժբախտաբար թերաւարտ:

Մատենագիտական ցուցակի մէջ չենք ընդգրկած նաեւ Մեսրոպ Արք. Նշանեանի նամականիի հրատարակեալ նմոշները, որովհետեւ անոնք հանրութեան կը ներկայացնեն Արշակ Զօպանեանի ու Թէոդիկի կողմէ իրեն ուղղուած նամակները⁶: Նշանեանի կողմէ Թէոդիկի ուղղեալ նամակները մեր կողմէ հրատարակութեան պատրաստուեցան եւ շուտով պիտի հրատարակուին «Հայկազեան» հայագիտական հանդէսի հերթական թիւին մէջ, «Մեսրոպ Եպս. Նշանեանի եւ Թէոդիկի նամակագրական ժառանգութիւնը (1925-1928)» խորագրով: Իսկ Զօպանեանի ուղղեալ նամակները հրատարակութեան կը պատրաստենք այս շրջանին եւ կը ծրագրենք զանոնք «Սիոն»ին յանձնել յաջորդ թիւին մէջ հրատարակելու համար:

Մեսրոպ Արք. Նշանեանի գործունէութիւնը մեծ մասամբ ծածուկ մնացած ըլլալով հանդերձ եղած են ու կ'ըլլան անձեր, որոնք կ'անդրադառնան իր անձին ու գործունէութեան: Անոնցմէ ամենէն ակնառուն անկասկած մեծանուն գրագէտ Յակոբ Օշականն է, որ առիթն ունեցած է բարեկամութիւն հաստատելու Նշանեանի հետ, Երուսաղէմի վանքը աշխատելու շրջանին: Սրբազանի մահուան առթիւ Օշական բերած է իր վկայութիւնը՝ «Սիոն»ի մէջ ստորագրելով Նշանեանի անձն ու վաստակը վեր առնող յօդուած մը⁷: Ողջունելի է, որ ժամանակակից ուսումնասիրողները եւս ատեն-ատեն կ'անդրադառնան Մեսրոպ Արք. Նշանեանի անունին: Անոնցմէ է Երեւանի Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանագիտութեան, գրադարանագիտութեան եւ մատենագիտութեան ամպիրոնի դոցենտ, բանասիրական գիտութիւններու թեկնածու Անահիտ Մուրատեան, որ երանջանկայիշատակ պատրիարքի մասին հրատարակած է կենսագրական ակնարկ մը⁸: Իսկ եկեղեցական պատմու-

³ Տե՛ս «Անձնական նամակներ Մեսրոպ Արք. Նշանեանի 1935-1937»:

⁴ Ն. Արք. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ա. Յակոբեանց, Բ. ԺԱ, Երուսաղէմ, 1991, էջ 178-185:

⁵ Անդ, էջ 185:

⁶ Ա. Գալայեան, Նամակներ Արշակ Զօպանեանէ, «Սիոն», Նոյեմբեր-Դեկտեմբեր, թիւ 11-12, 1972, էջ 419-430; Վաչէ Դազարեան, «Թղթեայ զաւակներու հայրը»՝ Թէոդիկ, «Հայկազեան» հայագիտական հանդէս, թիւ ԻԶ, Պէյրուք, 2006, էջ 263-296:

⁷ Յ. Օշական, Մեսրոպ Պատրիարք Նշանեան (Հայ մատենագրութեան մէջ), «Սիոն», Յուլիս-Օգոստ.-Սեպտ., թիւ 7-8-9, 1944, էջ 119-127:

⁸ Ա. Մուրադեան, Մեսրոպ Արքեպիսկոպոս Նշանեան, «Հայագիտական հանդէս», թիւ 1 (35), Երեւան, 2017, էջ 116-121:

թեան մասնագետ դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան առիթով մը անդրադարձած է Մեսրոպ Արք. Նշանեանի օրագրութեան⁹:

Կատարելէ ետք այս նշումները, կը սիրենք յուսալ, որ այս աշխատանքը դառնայ սկիզբ երջանկայիշատակ Մեսրոպ Արք. Նշանեանի մասամբ անյայտ մնացած ժառանգութեան նոր վերլուծումներու ու արժեւորումներու, ինչպէս նաեւ աւանդութենէ ներշնչուած, բայց միաժամանակ քննադատական տեսանկիւնով առաջնորդուող հոգեւոր մտածումի համար:

Մատենագիտական համադրութիւնը կեանքի կոշուեցաւ յատկապէս գրադարանային աշխատանքի, ինչպէս նաեւ արխիւային աղբիւրներու, ժամանակակից մամուլի եւ ձեռագրական ժառանգութեան համադրմամբ: Այս առթիւ երախտագիտութեամբ պիտի յիշեմ Սրբոց Յակոբեանց միաբանութեան այն բոլոր եկեղեցական անդամներն ու ձեռագրատան, մատենադարանի ու արխիւատան աշխարհական աշխատակիցները, որոնք իրենց մասնագիտական թէ՛ բարոյական աջակցութեամբ նպաստեցին այս աշխատանքին:

ԴՈԿՏ. ՍԵՒԱՆ ԿՍՐԿ. ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

ԳԻՐՔԵՐ

1. «Անդրաշխարհեան արձագանգ», ոգեկոչեցին Մեսրոպ Վարդապետ [Նշանեան] եւ Վահան-Ասլան, Երուսաղէմ, 1912 (32 էջ):
2. «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ» հրատ.՝ Մեսրոպ Վարդապետ Նշանեան, Տպարան Առաք. Աթոռոյ Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1915, Ա-ՀԳ+667 էջ («Գրիգոր վարդապետ Դարանաղցի», էջ Թ-ՀԳ, Մեսրոպ Վարդապետ Նշանեան)¹⁰:
3. Տիգրան Հ. Թ. Սաւալանեանց, «Պատմութիւն Երուսաղէմի», գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց՝ Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան, տպարան Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1931, Ա-ԼԲ+1-1326, («Թարգմանիչի զեկոյցը», Մ. Ե. Ն., «Յաւելուած» (էջ 1182-էն սկսեալ), զոր ճոխացուցած է Մեսրոպ Եպս. Նշանեան):
4. «Հատընտիր պատմուածքներ», հայացուց Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան], Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1932, [247 էջ]: Բ հրատարակութիւնը 1948-ին:
5. «Տպարան Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի. Հարիւրամեայ

⁹ Տե՛ս «Հարիւրամեակ 1917 թուի օրագրութիւն Մեսրոպ Պատրիարք Նշանեանի», «Զարթօն», Օգոստոս 30, 2018 (տե՛ս <https://zartonkdaily.net/2018/08/30/հարիւրամեակ-1917-թուի-օրագրութիւն-մեսրոպ/>):

¹⁰ Նշանեան Դարանաղցիի ժամանակագրութենէն տեղեակ էր առնուազն 1907 թուականին, երբ կը վարէր «Գանձարանապետ»ի պաշտօն, Երուսաղէմի մէջ: Այս մասին կը պատմէ Արշակ Ալպոյանեան «Ռումելիի հայերը» ձեռագիր երկին մէջ (Տե՛ս Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, 1909, Գ տարի, էջ 214): Նշանեան ձեռագրի թղ. 245բ.-ի ներքեւ շեղագիր, հետեւեալ յիշատակարանը գրի առած է. «Յիշեցե՛ք զՄեսրոպ Վարդապետն Նշանեան Բիւզանդացի, որ հրատարակութեամբ ի լոյս եւած զԺամանակագրութիւն Գրիգորի Վարդապետի Դարանաղցւոյ: Դարձեալ յիշեցե՛ք զհոգի նորոգ հանգուցեալ Տէր Սուրբաս արքեպիսկոպոսի Պարգեանց՝ միաբանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, որ իմքնայօժար նուիրաբերութեամբ սատարեաց տպագրութեան մատենիս: 1 Յունուար 1915, Երուսաղէմ, ի Վանս Ս. Յակոբեանց» (Տե՛ս Նորայր Եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 97):

յորբելեանին առթիւ 1833-1933 (արտատպուած «Սիոն»էն)», Երուսաղէմ, տպ. Սըրբոց Յակոբեանց, 1933, [36 էջ]:

6. «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի, յաւելուած Ա. Թուղթեր, Բ. Ուղերձներ, Գ. Գանձեր եւ ողբեր», հրատ.՝ Մեսրոպ Արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, Տպարան Սըրբոց Յակոբեանց, 1939, Ա-ՃԽԴ+715 էջ («Ներածութիւն», էջ Է-ՃԼԴ, Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս]Ն.[շանեան], «Օրագրութիւն Մինաս պատրիարքի Ամդեցոյ», էջ ՃԼԵ-ՃԽԴ)¹¹:
7. «Յուցակ Ս. Յակոբայ գանձատան մէջ պահուած ձեռագրաց», կազմեց՝ Մեսրոպ Արք. Նշանեան, հրատարակեց՝ Հայրիկ Արք. Ասլանեան, Երուսաղէմ, 1965, [18 էջ]¹²:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մեսրոպ Վրդ. Նշանեան
«Մամբրէ Եպիսկ. Մարկոսեան»
«Բիւզանդիոն», Պոլիս, 2/15 Փետրուար 1907, թիւ 3170,
3/16 Փետրուար 1907, թիւ 3171:
2. Մեսրոպ Վրդ. Նշանեան
«Պալաթի Ս. Հրեշտակապետ Եկեղեցին»
«Բիւզանդիոն», Պոլիս, 23 Մարտ/5 Ապրիլ 1907, թիւ 3187:
3. Մեսրոպ Վ.[արդապետ] Նշանեան
«Ո՞վ է Զուղայեցի Յակոբ Դ. Կաթողիկոսին յաջորդը», Եկեղեցապատմական, «Տաճար»,
Պոլիս, 30 Յունիս 1912, թիւ 25, էջ 369-371:
4. Մեսրոպ Վ.[արդապետ] Նշանեան
«Պաղեստինեան հին յուշեր Խրիմեան եւ Իզմիրլեան կաթողիկոսներէ», «Տաճար»,
Պոլիս, 30 Մարտ 1913, թիւ 7, էջ 149-150:

¹¹ Մեսրոպ Վրդ. Նշանեան Քէօմիւրճեանի «Օրագրութիւն»ի ձեռագիրը յայտնաբերած է 1907-ին, երբ Մայր Աթոռի միաբան Մեսրոպ Վրդ. Տէր Մովսիսեան Երուսաղէմի մէջ կը ցուցակագրէր ձեռագիրները, իսկ ինք, որպէս Երուսաղէմի ձեռագրատան պատասխանատու, կ'աշխատակցէր անոր: Նշանեան 1911-ին, երբ քանի մը տարւան բացակայութենէ ետք վերստին Ս. Աթոռ կը վերադառնայ, կ'արտագրէ զայն տպագրութեան համար (այս մասին տես նաեւ Մեսրոպ Արք. Տէր Մովսիսեանի, 26 Յուլիս 1937, «Անձնական նամակներ Մեսրոպ Արք. Նշանեանի 1935-1937»): Քէօմիւրճեանի «Օրագրութիւն»ը պատրաստ էր արդէն 1925 թուականին եւ Սըրբազանը հրատարակութեան համար կը սպասէր բարեպատեն առիթի (Տէ՛ս նամակ Ատրպետի, 19 Հոկտ. 1925, «Անձնական նամակներ Մեսրոպ Արք. Նշանեանի 1924-1928»): Սիմէոն Լեհացիի ուղեգրութեան՝ 1936-ին Վիեննայի մէջ, Միսիթարեանց տպարանէն հրատարակուիլը խթան եղած է, որ Մեսրոպ Սըրբազան տարիներ առաջ հրատարակութեան պատրաստած Քէօմիւրճեանի «Օրագրութիւն»ը վերստին ձեռք առնէ ու տպագրութեան յանձնէ, Ս. Յակոբեանց մամուլին (այս մասին տես նաեւ Վ. Ներսէս Վրդ. Ակիմեանի, 22 Մայիս 1937, «Անձնական նամակներ Մեսրոպ Արք. Նշանեանի 1935-1937»): Նշանեան «Օրագրութեան» ձեռագրին վերջին կողմին ներքին կողմը, շեղագիր ու մաքուր, հետեւեալ յիշատակարանը ձգած է, 1938-ին. «Յիշեցէ՛ք զՄեսրոպ Արքեպիսկոպոսն Նշանեան Կ. Պոլսեցի՝ զլուսարարապետն Սրբոյ Աթոռոյս, որ բազում աշխատ եղել ի վերայ գրչագիր մատենիս եւ տպագրութեամբ ի լոյս եհան զսա ի Տպարանէ Վանացս Սրբոց Յակոբեանց, եւ Աստուած ողորմի ասացէ՛ք ինքեան եւ ծնողաց նորին Նշանի եւ Ազնուի: Ի 25 Դեկտեմբերի 1938 ամի» (Տէ՛ս Նորայր Եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 2, Երուսաղէմ, 1972, էջ 307):

¹² Այս հրատարակութիւնը կ'ամփոփէ Ձեռագրաց մատենադարանի ու Գանձատան մէջ ի պահ դրուած Աւետարաններու համառօտ ցուցակագրում մը: Ցուցակագրուած են նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքութեան կողմէ Ա. Աշխարհամարտի զինադադարին Երուսաղէմ դրկուած հատորները: 1907-ին սկսած աշխատանքը ամբողջացած է 1937-ին:

5. Մեսրոպ Վ.[արդապետ] Նշանեան
«Ինչ կը մտածեն Երուսաղէմի միաբանները», «Տաճար», Պոլիս, 7 Դեկտեմբեր 1913, թիւ 38-39, էջ 618: [Երուսաղէմի կանոնագիրի Ազգային ժողովի կողմէ քննարկման առթիւ]:
6. Մեսրոպ Վարդապետ Նշանեան
«Օրագրութիւն Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի», «Շողակաթ» Ս. էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք Ա., Վաղարշապատ, 1913, էջ 47-65:
7. Մեսրոպ Վրդ. Նշանեան
«Ակնարկ մը Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանին վրայ», «Օրացոյց եւ գուշակութիւնք օգոց 1914 թուականին Քրիստոսի», Երուսաղէմ, 1914, էջ 3-85 (յաւելուած)¹³:
8. Մեսր.[ոպ] Վրդ. Նշանեան
Հատուած մը Թէոդիկի ուղղեալ նամակէ՝ «Տիպ ու տառ»ի հրատարակութեան առթիւ, «Ամէնուն տարեցոյցը», 1914, էջ 172:
9. Անստորագիր
«Էլեոն Ե.ի ինքնագիր յիշատակարանը», «Ամէնուն տարեցոյցը», 1914, էջ 238-240:
10. Մեսրոպ Վ.[արդապետ] Նշանեան
Հատուած մը Թէոդիկի ուղղեալ նամակէ՝ 1915-ի «Տարեցոյց»ի հրատարակութեան առթիւ, «Ամէնուն տարեցոյցը», 1916-20, էջ 9:
11. Մեսրոպ Վ.[արդապետ] Նշանեան
«Երուսաղէմի գրաւումը», «Գրպանի տարեցոյց», կազմեց Սիմոն Գաբամաճեան, Բ. տարի, Պոլիս, 1921, էջ 62-95: [քաղուած օրագրութենէ]
12. Մեսրոպ Վրդ. Նշանեան
Հատուած մը Թէոդիկի ուղղեալ նամակէ՝ կնոջ Արշակունի Թէոդիկի մահուան առթիւ, «Ամէնուն տարեցոյցը», 1923, էջ 21:
13. [Մեսրոպ Վրդ. Նշանեան]
«Անտիպ նամակ Գրիգոր Շղթայակիրէ», «Ամէնուն տարեցոյցը», 1923, էջ 387-389:
14. Մ[եսրոպ]. Վ[արդապետ]. Ն[շանեան].
«Բեթսայի դայի Այրին (Զատկական Պատմութեամբ)», «Հայաստանի Կոչնակ», 19 Ապրիլ 1924, թիւ 16, էջ 495-496: [հայացում]
15. Մ[եսրոպ]. Վ[արդապետ]. Ն[շանեան].
«Դպրոցը առանց Աստուծոյ», «Հայաստանի Կոչնակ», 20 Սեպտ. 1924, թիւ 38, էջ 1197-1198: [հայացում]
16. Մ[եսրոպ]. Վ[արդապետ]. Ն[շանեան].
«Աղբիւրը», «Հայաստանի Կոչնակ», 15 Նոյեմբեր 1924, թիւ 46, էջ 1453: [հայացում]
17. Մ[եսրոպ]. Վ[արդապետ]. Ն[շանեան].
«Վեհանձն վրէժխնդրութիւն», «Հայաստանի Կոչնակ», 13 Դեկտեմբեր 1924, թիւ 50, էջ 1582: [հայացում]

¹³ «Երուսաղէմի հայ տպագիր գրքի մատենագիտութիւն (1833-1996)» հատորի յարգելի հեղինակը այս մէկը նշած է որպէս անշատ հրատարակութիւն: Մեսրոպ Եպս. Նշանեան այս ուսումնասիրութիւնը տպարանի 100-ամեայ յոբելեանին առթիւ պիտի ընդարձակէր ու պիտի հրատարակէր «Սիոն»ի մէջ, ուրկէ ալ որպէս առանձնատիպ պիտի դուրս հետաքրքիրներու սեղանին, 1933-ին:

18. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մոգ թագաւորի թոռնուհին», «Հայաստանի Կոչնակ», 11 Սեպտեմբեր 1926, թիւ 37, էջ 1298-1299, 18 Սեպտեմբեր 1926, թիւ 38, էջ 1322-1325: [հայացում]
19. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Բոլքա (Մննդեան պատմութեամբ)», «Հայաստանի Կոչնակ», 25 Դեկտեմբեր 1926, թիւ 52, էջ 1768-1770: [հայացում]
20. Մեսրոպ Եպսկ. Նշանեան
«Սուրբ Գրոց տասներկու աղուները նշանակ տասներկու առաքեալներու», «Տաթեւ» կրօնական տարեցոյց, Արտաւազդ Վարդապետ, Հալէպ-Սուրիա, Գ. տարի, 1927, էջ 212-216:
21. Մեսրոպ Եպ[ի]ս[կոպոս]. Նշանեան
«Երուսաղէմի հայկ. խճանկարը», «Ամէնուն տարեցոյցը», 1927, էջ 399-406:
22. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Իսրայէլի ջուրերը», Պաղեստինագրական, «Սիոն», Փետրուար 1927, թիւ 2, էջ 48-51: [հայացում]
23. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Իսրայէլի ջուրերը», Պաղեստինագրական, «Սիոն», Մարտ 1927, թիւ 3, էջ 79-81: [հայացում]
24. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յիսուսի վարդապետութիւնը», «Հայաստանի Կոչնակ», 30 Ապրիլ 1927, թիւ 18, էջ 561:
25. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Շաքարեղէններու տուփը», «Հայաստանի Կոչնակ», 28 Մայիս 1927, թիւ 22, էջ 684-686: [հայացում]¹⁴
26. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Միսայէլ սրնգահարը (պատմութեամբ)», «Հայաստանի Կոչնակ», 16 Յուլիս 1927, թիւ 29, էջ 912-914: [հայացում]¹⁵
27. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ծագող առաւօտը (պատմութեամբ)», «Հայաստանի Կոչնակ», 3 Սեպտեմբեր 1927, թիւ 36, էջ 1133-1136, 10 սեպտեմբեր 1927, թիւ 37, էջ 1164-1166: [հայացում]
28. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սաբայի թագուհին երկրորդ ուղեւորութիւնը», «Հայաստանի Կոչնակ», 24 Սեպտեմբեր 1927, թիւ 39, էջ 1231-1234, 1 Հոկտեմբեր 1927, թիւ 40, էջ 1262-1265: [հայացում]
29. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Լոյսի կաթիլները» (պատմութեամբ), «Սիոն», Սեպտեմբեր 1927, թիւ 9, էջ 271-275: [հայացում]

¹⁴ Այս եօթը պատմութեամբներ (թիւ 14-19, 25) հետագային տեղ գտած են «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնները կատարուած են ֆրանսերէնէ: Հելինակը նշուած չէ:

¹⁵ Այս պատմութեամբը «Միսայէլի ընտրածը» վերնագրով տեղ գտած է «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնը կատարուած է ֆրանսացի արձակագիր Լիսի Ռոզիէ-Ֆոնթէյնի (1895-1986) 1926-ին հրատարակուած «Աստուածաշնչական ժամանակներէն» (Aux Temps Bibliques) գրքէն:

յացում]։

30. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Որթատունկը եւ գինին Ս. Գրոց մէջ», «Սիոն», Դեկտեմբեր 1927, թիւ 12, էջ 366-368: [հայացում]

31. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Թամարի ընծան (Մենդեան պատմութեամբ)», «Հայաստանի կոչնակ», 24 Դեկտեմբեր 1927, թիւ 52, էջ 1644-1647: [հայացում]

32. Մեսրոպ Եպ[ի]սկոպոս Նշանեան

«Նկարիչ Սրբազանը», «Ամէնուն տարեցոյցը», Թէոդիկ, 1928, տպ. «Մասիս», Փարիզ, էջ 517-526:

33. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ (պատմութեամբ)», «Հայաստանի կոչնակ», 28 Ապրիլ 1928, թիւ 17, էջ 525-527, 5 Մայիս 1928, թիւ 18, էջ 555-558, 12 Մայիս 1928, թիւ 19, էջ 586-588: [հայացում]¹⁶

34. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Զայն մը Հրատէն (պատմութեամբ)», «Հայաստանի կոչնակ», 15 սեպտեմբեր 1928, թիւ 37, էջ 1169-1170: [հայացում]¹⁷

35. Մեսրոպ Եպսկ. Նշանեան

«Բիւրեղեայ մանեակը»

«Տաթեւ» կրօնական տարեցոյց, Արտաւազդ Վարդապետ, Ե. տարի, 1929, Հալէպ-Սուրիա, էջ 172-202: [հայացում]¹⁸

36. «Մեսրոպ սրբազանի ուղերձը» [յանուն միաբանութեան, Ամանորի առթիւ], «Սիոն», Փետրուար-Մարտ 1929, թիւ 2-3, էջ 92-93:

37. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Յորեկեանը երրայեցուց քով», Բանասիրական, «Սիոն», յունուար 1930, թիւ 1, էջ 25-26: [հայացում]

38. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Բեթղէհէմցի աղջիկը» (պատմութեամբ), «Հայաստանի կոչնակ», 4 Յունուար 1930, թիւ 1, էջ 13-14, 11 Յունուար 1930, թիւ 2, էջ 49-51, 18 Յունուար 1930, թիւ 3, էջ 79-81: [հայացում]¹⁹

39. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Հրեաներու Պաղեստին ներգաղթը», «Հայաստանի կոչնակ», 15 Փետրուար 1930, թիւ 7, էջ 200-202, 22 Փետրուար 1930, էջ 237-239: [ամփոփում]

¹⁶ Վերջին հինգ պատմութեամբները (թիւ 27-29, 31, 33) տեղ գտած են «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնները կատարուած են ֆրանսացի արձակագիր Լիւսի Ռոզիէ-Ֆոնթէյնի (1895-1986) 1926-ին հրատարակուած «Աստուածաշնչական ժամանակներէն» (Aux Temps Bibliques) գրքէն:

¹⁷ Այս պատմութեամբը հետագային տեղ գտած է «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնը կատարուած է ֆրանսերէնէ: Հեղինակը նշուած չէ:

¹⁸ Պատմութեամբը հետագային տեղ գտած է «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնը կատարուած է ֆրանսացի արձակագիր Լիւսի Ռոզիէ-Ֆոնթէյնի (1895-1986) 1926-ին հրատարակուած «Աստուածաշնչական ժամանակներէն» (Aux Temps Bibliques) գրքէն:

¹⁹ Այս պատմութեամբը «Հոսիս Բերդեմեմացիին» խորագրով հետագային հրատարակուած է «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնը կատարուած է ֆրանսերէնէ: Հեղինակը նշուած չէ:

40. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ծոմապահոթիւնը հին եւ արդի հրէից քով», Կրօնական, «Սիոն», Մարտ 1930, թիւ 3, էջ 71-73: [հայացում]
41. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Աշխատանք եւ երջանկութիւն», «Հայաստանի կոչնակ», 17 Մայիս 1930, թիւ 20, էջ 623: [հայացում]²⁰
42. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մարտիրոս Վրդ. Կաֆացի Երուսաղէմէն՝ առ Եղիազար Վրդ. Այնթապցի», «Աստուածատուր Վարդապետի ձեռագիրն է», Դիւան Ա. Յակոբայ Ա եւ Բ, «Սիոն», Նոյեմբեր 1930, թիւ 11, էջ 350-351²¹:
43. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մարտիրոս Վրդ. Կաֆացի Ռոտոսթոյէն՝ առ Եղիազար Վրդ. Այնթապցի յԵրուսաղէմ», «Մարտիրոս Վրդ. Կաֆացի՝ Կ. Պոլսէն, առ Եղիազար Այնթապցի յԵրուսաղէմ», Դիւան Ա. Յակոբայ Գ եւ Դ, «Սիոն», Դեկտեմբեր 1930, թիւ 12, էջ 384-386:
44. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մարտիրոս Վրդ. Կաֆացի՝ Կաֆայէն, առ Եղիազար Այնթապցի՝ յԵրուսաղէմ», Դիւան Ա. Յակոբայ Ե, «Սիոն», Մայիս 1931, թիւ 5, էջ 146-147:
45. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սինեդրոն կամ հրէից մեծ ժողովը», Պատմական, «Սիոն», Նոյեմբեր 1931, թիւ 11, էջ 330-332: [հայացում]
46. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿ. ՆՇԱՆԵԱՆ
«Յակոբ Նալեան պատրիարքի նամակը», «Ընդարձակ տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի», Նոր շրջան, Ը. տարի, կազմեց՝ Թորոս Ազատեան, 1932, Պոլիս, էջ 107-111:
47. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մոգերը», Կրօնական, «Սիոն», Յունուար 1932, թիւ 1, էջ 4-5: [հայացում]
48. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յուլիանոս Ուրացող, Երուսաղէմի տաճարին վերաշինութիւնը (363)», Պատմական, «Սիոն», Փետրուար 1932, թիւ 2, էջ 48-50: [հայացում]
49. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յուլիանոս Ուրացող, Երուսաղէմի տաճարին վերաշինութիւնը (363)», Պատմական, «Սիոն», Մարտ 1932, թիւ 3, էջ 82-85: [հայացում]
50. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Զատկական ընթրիքը», Կրօնական, «Սիոն», Ապրիլ 1932, թիւ 4, էջ 101-102: [հայացում]

²⁰ Այս պատմութեամբ հետազային հրատարակուած է «Հատընտիր պատմութեամբներ» հատորին մէջ: Թարգմանութիւնը կատարուած է ֆրանսերէնէ: Հեղինակը նշուած չէ:

²¹ «Դիւան Ա. Յակոբայ» շարքը հրատարակել սկսել է ֆանի մը տարի վերջ հետեւեալ տողերը պիտի գրէր Սըրբազանը. «Դժբախտ նակատագիր մը ունի ԴԻԻԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՅ-Ե: Յաւալի է որ այդ տեսակ վաւերագրերու արժէքը գնահատող չունինք տակաւին հոս: Հազար հինգ հարիւրէ աւելի հին նամակներ հաւաքած ունիմ ցարդ: (Տե՛ս նամակ Յարութին Քիւրտեանի, 24 Փետրուար 1934, «Անձնական նամակներ Մեսրոպ Արք. Նշա-նեանի 1929-1934»): Մեսրոպ Սըրբազանին հրատարակած նամակներուն մեծամասնութիւնը տեղ գտած է «Նա-մականի.1», ձեռ. 186, Նորայր Եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Ա. Յակոբեանց, հ. Ա, 1966, Երուսաղէմ, էջ 548-556:

51. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մարտիրոս Վրդ. Կաֆացի՝ Ռոտոսթոյէն, առ Եղիազար Այնթապցի՝ յԵրուսաղէմ», Դիւան Ա. Յակոբայ-Զ, «Ղազար Վրդ. Կլմպօզ՝ Կ. Պոլսէն, առ Եղիազար Այնթապցի՝ յԵրուսաղէմ (բանտին մէջէն գրուած)», Դիւան Ա. Յակոբայ-Է, «Սիրոն», Ապրիլ 1932, թիւ 4, էջ 121-123: [հրապարակում]
52. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ա. Երիտասարդութիւնը Ս. Գրոց մէջ», «Բ. Ծերութիւնը Ս. Գրոց մէջ», Կօնական, «Սիրոն», Յունիս 1932, թիւ 6, էջ 166-168: [ամփոփում]
53. [անստորագիր²²]
«Քացիսուկ Ներսէս Վրդ. Հռոմկլայեցի՝ առ Եղիազար՝ Կ. Պոլիս», Դիւան Ա. Յակոբայ-Ը, «Սիրոն», Յունիս 1932, թիւ 6, էջ 185-186: [հրապարակում]
54. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Տաղաւարահարաց տօնը», «Սիրոն», Օգոստոս 1932, թիւ 8, էջ 229-233: [հայացում]
55. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մարտիրոս Կաֆացի Պատրիարք Կ. Պոլսոյ՝ առ Եղիազար՝ Կ. Պոլիս», Դիւան Ա. Յակոբայ-Թ, «Մարտիրոս Վրդ. Կաֆացի՝ Կ. Պոլսէն, առ Եղիազար Այնթապցի՝ յԵրուսաղէմ», Դիւան Ա. Յակոբայ-Ժ, «Սիրոն», Օգոստոս 1932, թիւ 8, էջ 252-254: [հրապարակում]
56. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մարտիրոս քահանայ Քէօմիւրճեան Կ. Պոլսէն՝ առ Եղիազար Այնթապցի՝ Ի Բերիա», Դիւան Ա. Յակոբայ-ԺԱ, «Սիրոն», Սեպտ. 1932, թիւ 9, էջ 278-280: [հրապարակում]
57. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ուխտի տապանակը», Կրօնական, «Սիրոն», Հոկտեմբեր 1932, թիւ 10, էջ 293-296: [հայացում]
58. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Քրիստոսի ազգաբանութիւնը Մատթէոսի աւետարանին մէջ», «Սիրոն», Յունուար 1933, թիւ 1, էջ 9-11: [հայացում]
59. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սարգիս Թէքիրտաղցի Կ. Պոլսէն՝ առ Եղիազար Այնթապցի Ի Հալէպ», Դիւան Ա. Յակոբայ-ԺԲ, «Սիրոն», Յունուար 1933, թիւ 1, էջ 23-24: [հրապարակում]
60. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ինքնակենսագրութիւն Վանեցի Պօղոս Գ. Պատրիարքին Երուսաղէմի», Պատմական, «Սիրոն», Փետրուար 1933, էջ 46-49: [հրապարակում]
61. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յովհաննէս Մուղնեցի՝ Կ. Պոլսէն առ Եղիազար Այնթապցի, Ի Հալէպ», «Յովհաննէս Մուղնեցի Կ. Պոլսէն՝ առ Եղիազար վարդապետ Ի Հալէպ», Դիւան Ա. Յակոբայ-ԺԳ, ԺԴ, «Սիրոն», Ապրիլ 1933, թիւ 4, էջ 119-122: [հրապարակում]
62. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Աստուածատուր Պատրիարք Տարօնեցի Երուսաղէմէն առ Եղիազար Այնթապցի Ի Հալէպ», «Կարկուտ Ոնփրիոս Վրդ. առ Եղիազար կաթողիկոս», Դիւան Ա. Յակոբայ-ԺԵ, ԺԶ, «Սիրոն», Մայիս 1933, թիւ 5, էջ 150-153: [հրապարակում]

²² Հրապարակողը Մեսրոպ Սրբազանն է, ինչպէս որ ինք եղած է շաբթի միւս բնագիրներուն հրատարակիչը:

63. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ծառերը Սուրբ Գրոց մէջ Ա», Կրօնական, «Սիոն», Յունիս 1933, թիւ 6, էջ 172-174: [ամփոփում]
64. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ծառերը Սուրբ Գրոց մէջ Բ», Կրօնական, «Սիոն», Յունիս 1933, թիւ 7, էջ 212-213: [ամփոփում]
65. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Պաղեստինի այլեւայլ անունները», Կրօնական, «Սիոն», Օգոստոս 1933, էջ 233-235: [հայացում]
66. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յովհան Եպս. Ադրիանուպոլսէն՝ առ Եղիազար կաթողիկոս», «Կոնդակ Եղիազար կաթողիկոսի Ֆիլիպէէն՝ առ Զաքարիա վարդապետի Դամասկոս», Դիւան Ս. Յակոբայ-Ժէ, ԺԸ, «Սիոն», Սեպտեմբեր 1933, թիւ 9, էջ 283-285: [հրապարակում]
67. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Հին Ուխտի քահանայապետը», Կրօնական, «Սիոն», Հոկտեմբեր 1933, թիւ 10, էջ 305-308: [հայացում]
68. Մեսրոպ Եպս. Նշանեան
«Տպարան Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի (հարիւրամեայ յորեկեանին առթիւ) 1833-1933», Պատմական, «Սիոն», Նոյեմբեր 1933, թիւ 11, էջ 338-371:
69. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Տոմարը Հին Հրէից մօտ», Տոմարագիտական, «Սիոն», Դեկտեմբեր 1933, թիւ 12, էջ 454-456: [հայացում]
70. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սահակ Վարդապետ Ղլըմպիկ Նիկոմիդիայէն՝ առ Յակոբ Կաթողիկոս Զուղայեցի յԵւդոկիա», Դիւան Ս. Յակոբայ-ԺԹ, «Սիոն», Դեկտեմբեր 1933, թիւ 12, էջ 462-463: [հրապարակում]
71. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սամարացիքի հնումն եւ այսօր», Կրօնական, «Սիոն», Փետրուար 1934, թիւ 2, էջ 41-43: [հայացում]
72. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Եօթնաստեղեան աշտանակը», Կրօնական, «Սիոն», Մարտ 1934, թիւ 3, էջ 74-75: [հայացում]
73. Մեսրոպ Եպ[ի]ս[կոպոս]. Նշանեան
«Գրիգոր Կանցի (Կարին), նոր վկայ», Վկայաբանական, «Սիոն», Ապրիլ 1934, թիւ 4, էջ 122-123:
74. Մ.[եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Կ. Պոլսոյ Պատրիարք Սարգիս Թէքիրտաղցի առ Եղիազար Կաթողիկոս յԵրուսաղէմ», «Յակոբ Կաթողիկոս Զուղայեցի Ամասիայէն առ Եղիազար Կթղ. Երուսաղէմ», Դիւան Ս. Յակոբայ-Ի, ԻԱ, «Սիոն», Ապրիլ 1934, թիւ 4, էջ 124-125: [հրապարակում]

75. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Պատկերները հրէից քով», Կրօնական, «Սիրոն», Յունիս 1934, թիւ 6, էջ 176-177: [հայացում]
76. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Պաղեստինի վայրի կենդանիները ի հնումն եւ այսօր», Կրօնական, «Սիրոն», Օգոստոս 1934, թիւ 8, էջ 232-235: [հայացում]
77. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Անսուրբ անասունները», Կրօնական, «Սիրոն», Սեպտեմբեր 1934, թիւ 9, էջ 264-266: [հայացում]
78. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Հրէական շաբաթը ի հնումն եւ այսօր», Կրօնական, «Սիրոն», Հոկտեմբեր 1934, թիւ 10, էջ 299-303: [հայացում]
79. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Կարեւոր պեղումներ Բեթղեհէմի տաճարին մէջ», Հնախօսական, «Սիրոն», Նոյեմբեր 1934, թիւ 11, էջ 330-342:
80. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ամսագլխի տօնը կամ լուսնատօնը հին հրէից մօտ», Կրօնական, «Սիրոն», Յունուար 1935, թիւ 1, էջ 10-11: [հայացում]
81. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սփիւռքի հրեաները», Կրօնական, «Սիրոն», Փետրուար 1935, թիւ 2, էջ 44-48: [հայացում]
82. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մեսիական Պաղեստինի գաղափարական աշխարհագրութիւնը», Կրօնական, Ապրիլ 1935, էջ 106-110: [հայացում]
83. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Վանեցի Պօղոս Պատրիարքի ինքնաձեռագիր մէկ յիշատակարանը», Բանասիրական, «Սիրոն», Մայիս 1935, թիւ 5, էջ 156-159: [հրապարակում]
84. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Փարիսեցւոց աղանդը», Կրօնական, «Սիրոն», Յունիս 1935, թիւ 6, էջ 174-176: [հայացում]
85. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Դպիրները կամ օրինաց վարդապետները», Կրօնական, «Սիրոն», Յուլիս 1935, թիւ 7, էջ 216-218: [հայացում]
86. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Սաղուկեցւոց աղանդը», Կրօնական, «Սիրոն», Սեպտեմբեր 1935, թիւ 9, էջ 270-272: [հայացում]
87. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Մաքսաւորները», Կրօնական, «Սիրոն», Հոկտեմբեր 1935, թիւ 10, էջ 301-302: [հայացում]

88. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Կամուրջ», Կրօնական, «Սիոն», Յունիս 1936, թիւ 6, էջ 175: [հայացում]
89. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Զկնորսութիւնը Գեննեսարեթի ծովակին վրայ եւ Սուրբ Աւետարանը», Պաղեստինագրական, «Սիոն», Դեկտեմբեր 1936, թիւ 12, էջ 375-381: [հայացում]
90. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Երաժշտութիւնը հին հրէից մօտ», Կրօնական, «Սիոն», Մարտ 1937, թիւ 3, էջ 72-74: [հայացում]
91. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Քաղաքավարութիւնը Ս. Գրոց մէջ», Կրօնական, «Սիոն», Ապրիլ 1937, թիւ 4, էջ 102-103: [հայացում]
92. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Աղը Ս. Գրոց մէջ», Կրօնական, «Սիոն», Մայիս 1937, թիւ 5, էջ 144-145: [հայացում]
93. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Բառախաղերը Ս. Գրոց մէջ», Կրօնական, «Սիոն», Մայիս 1937, թիւ 5, էջ 145: [հայացում]
94. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յովհաննու աւետարանին վաւերականութիւնը նորագոյն գիւտով մը հաստատուած», Կրօնական, «Սիոն», Մայիս 1937, թիւ 5, էջ 146: [հայացում]
95. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Փոլրիմը կամ Վիճակաց տօնը հին հրէից մօտ», Կրօնական, «Սիոն», Յունիս 1937, թիւ 6, էջ 172-173: [հայացում]
96. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Երախայրաց ընծայաբերութիւնը հին օրէնքի մէջ», Կրօնական, «Սիոն», Յունիս 1937, թիւ 6, էջ 173-174: [հայացում]
97. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ճաշասեղանները հին հրէից մօտ», Կրօնական, «Սիոն», Յուլիս 1937, թիւ 7, էջ 210: [հայացում]
98. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Հռոմայեցի դատաւորները կամ գործակալները Հրէաստանի մէջ», Կրօնական, «Սիոն», Յուլիս 1937, թիւ 7, էջ 211-212: [հայացում]
99. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յորդանանի ակերը», Պաղեստինագրական, «Սիոն», Օգոստոս 1937, թիւ 8, էջ 235-237: [հայացում]
100. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Յորդանան գետը», Պաղեստինագրական, «Սիոն», Հոկտեմբեր 1937, թիւ 10, էջ 310-315: [հայացում]
101. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]
«Ապաստանի քաղաքները Հին Կտակարանին մէջ», Կրօնական, «Սիոն», Նոյեմբեր 1937, թիւ 10, էջ 336-337: [հայացում]

102. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Նահապետական հիւրասիրութիւնը ի հնումն եւ այսօր», Կրօնական, «Սիոն», Դեկտեմբեր 1937, թիւ 12, էջ 364-365: [հայացում]

103. Մեսրոպ Արքեպ[ի]ս.[կոպոս] Նշանեան

«Զեկոյց», էջ Ե-է, Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս Տէր Մովսիսեան, «Հայկական երեք մեծ վանքերի Տաթևի, Հաղարծնի եւ Դադի եկեղեցիները եւ վանական շինութիւնները»ի մէջ, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1938, 151 էջ):

104. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Տոկոսաւոր փոխատուութիւնը հին հրէից քով», Կրօնական, «Սիոն», Յունուար 1938, թիւ 1, էջ 6-7: [հայացում]

105. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Կենսագրական նօթեր Տ. Եսայի Գ. Պատրիարքին Սուրբ Երուսաղէմի (իր ձեռքով գրի առնուած)», «Սիոն», Փետրուար 1938, թիւ 2, էջ 44-50: [հրապարակում]

106. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Ամենէն գեղեցիկ լոյսը», «Հայաստանի կոչնակ», 7 Յունուար 1939, թիւ 1, էջ 10-11: [հայացում]

107. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Թիւերը Ս. Գրոց մէջ», Կրօնական, «Սիոն», Դեկտեմբեր 1939, թիւ 12, էջ 384-386: [հայացում]

108. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«ԺԲ գլխով սահմանադրութիւն է», «Արդնցի Ոհան Վրդ. էրզրումէն առ Եղիազար կաթողիկոս ի Կ. Պոլիս», «Յովհան Եպիսկոպոս Ադրիանուպոլսէն առ Եղիազար Կաթողիկոս ի Կ. Պոլիս», Դիւան Ս. Յակոբայ-ԻԲ, ԻԳ, ԻԴ, «Սիոն», Մայիս-Յունիս 1940, թիւ 5-6, էջ 153-156: [հրապարակում]

109. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Ղլրմպիկ Սահակ Վրդ. առ Եղիազար կաթողիկոս», «(Խոճա Պաղտասար Կ. Պոլսէն առ Եղիազար Կաթողիկոս)», Դիւան Ս. Յակոբայ-ԻԲ, ԻԶ, «Սիոն», Յուլիս-Օգոստոս 1940, թիւ 7-8, էջ 201-203: [հրապարակում]

110. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Խոճա Ռուհիճան եւ Խոճա Պաղտասար Կ. Պոլսէն առ Եղիազար Կաթողիկոս)», «Յովհաննէս Վրդ. Թոխաթեցի Գաղատիայէն առ Եղիազար Կաթողիկոս», Դիւան Ս. Յակոբայ-ԻԷ, ԻԸ, «Սիոն», Հոկտեմբեր-Նոյեմբեր 1940, թիւ 10-11, էջ 282-284: [հրապարակում]

111. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Խոճա Ռուհիճան եւ Խոճա Պաղտասար Կ. Պոլսէն առ Եղիազար Կաթողիկոս)», «Յովհաննէս Վրդ. Թոխաթեցի Գաղատիայէն առ Եղիազար Կաթողիկոս», Դիւան Ս. Յակոբայ-ԻԷ, ԻԸ, «Սիոն», Հոկտեմբեր-Նոյեմբեր 1940, թիւ 10-11, էջ 282-284: [հրապարակում]

112. Մ.[Էսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Ապրօ Զէլէպուն թէմասուգներն են այս փօլիցայ», «(Ազգայինք ոմանք Կ. Պոլսէն առ Եղիազար Կաթողիկոս)», «(Եղիազար Կաթողիկոս Կրետէն առ ազգայինսն ի

Կ. Պոլիս)» Դիւան Ս. Յակոբայ-Իթ, Լ, ԼԱ, «Սիոն», Դեկտեմբեր 1940, թիւ 12, էջ 315-319: [հրապարակում]

113. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Ընկալագիր տասն հազար ասլանլու ղրուշի)», «(Ապրո Ձէլէպի առ Եղիազար Կաթողիկոս)», «(Երուսաղէմի միաբանք առ Եղիազար Կաթողիկոս ի Տիմիաթ)» Դիւան Ս. Յակոբայ- ԼԲ, ԼԳ, ԼԴ, «Սիոն», Յունուար-Փետրուար 1941, թիւ 1-2, էջ 40-42: [հրապարակում]

114. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Եղիա Եպիսկոպոս Երուսաղէմէ առ Եղիազար Կաթողիկոս ի Տիմիաթ)», «(Եղիա Եպիսկոպոս Եղուսաղէմէ առ Եղիազար Կաթողիկոս ի Հալէպ)», «(Մարտիրոս Վարդապետ Ղրիմեցի Հալէպէն առ Խօճա Էմիրզա ի Կ. Պոլիս)», Դիւան Ս. Յակոբայ- ԼԵ, ԼԶ, ԼԷ, «Սիոն», Մարտ-Ապրիլ 1941, թիւ 3-4, էջ 83-86: [հրապարակում]

115. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Զայս թուղթն է ղրկեր Ապրօն Սուքիաս վարդապետին խստութեամբ)», «(Ապրօ Ձէլէպի Կ. Պոլսէն առ Եղիազար Կաթողիկոս)», «(Ուխտագիր Եղիազար Կաթողիկոսի ի Հալէպ ընդ Մարտիրոս Վարդապետի Ղրիմեցույ)», «(Ուխտագիր Մարտիրոս Վարդապետի Ղրիմեցույ ընդ Եղիազար Կաթողիկոսի)», Դիւան Ս. Յակոբայ- ԼԸ, ԼԹ, Խ, ԽԱ, «Սիոն», Մայիս 1941, թիւ 5, էջ 126-127: [հրապարակում]

116. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Յակոբ Դ. Կաթողիկոս Զուղայեցի Կ. Պոլսէն առ Եղիազար Կաթողիկոս ի Հալէպ)», Դիւան Ս. Յակոբայ- ԽԲ, «Սիոն», Յունիս 1941, թիւ 6, էջ 157-158: [հրապարակում]

117. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Պատասխան Եղիազար Կաթողիկոսի Հալէպէն առ Յակոբ Դ. Կաթողիկոս ի Կ. Պոլիս)», «(Եղիա Եպիսկոպոս Էւ միաբանք՝ Երուսաղէմէն առ Եղիազար Կաթողիկոս՝ ի Հալէպ)», Դիւան Ս. Յակոբայ- ԽԳ, ԽԴ, «Սիոն», Յուլիս-Օգոստոս 1941, թիւ 7-8, էջ 200-202: [հրապարակում]

118. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«(Եղիազար Կաթողիկոս Հալէպէն առ Եղիա Եպիսկոպոս Երուսաղէմ)», «(Յովհան Եպիսկոպոս Աղբիանուպոլսէն առ Եղիազար Կաթողիկոս ի Հալէպ)», «(Երուսաղէմի ուխտաւորք Երուսաղէմէն առ Եղիազար Կաթողիկոս ի Կիպրոս)» Դիւան Ս. Յակոբայ- ԽԵ, ԽԶ, ԽԷ, «Սիոն», Նոյեմբեր-Դեկտեմբեր 1941, թիւ 11-12, էջ 308-310: [հրապարակում]

119. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Սուրբ Յակոբի սեպհականութեան խնդիր», «Սիոն», Մարտ-Ապրիլ 1942, թիւ 3-4, էջ 89-91: [հրապարակում]

120. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Հոգեգալուստ», «Սիոն», Մայիս-Յունիս 1943, թիւ 5-6, էջ 71-75: [քարոզ]

121. Մ.[Եսրոպ] Ե.[պիսկոպոս] Ն.[շանեան]

«Քարոզ Ծննդեան», «Սիոն», Հոկտ.Նոյ.Դեկտ. 1943, թիւ 10-11-12, էջ 134-136: [քարոզ]

122. «Օրագրութիւն Մեսրոպ վրդ. Նշանեանի (յիշատակարան 1917 յունուար 1-էն)»²³
 «Սիոն», Ապրիլ-Մայիս-Յունիս 1991, էջ 78-79, Յուլիս-Օգոստոս 1991, էջ 127-128, Սեպտ.-
 Դեկտ. 1991, էջ 193-194, Յուն.-Փետր.-Մարտ 1992, էջ 25-26, Ապրիլ-Մայիս-Յունիս
 1992, էջ 107-108, Յուլիս-Օգոստոս 1992, էջ 218-219, Սեպտ.-Դեկտ. 1992, էջ 289-290,
 Նոյեմբեր-Դեկտեմբեր 1994, էջ 329-330²⁴:

²³ Մեսրոպ Վրդ. Նշանեանի՝ «Սիոն»ի յաջորդական թիւերուն մէջ հրատարակուած, սակայն կիսատ մնացած օրագրութեան այս ընդարձակ հատուածը ենթադրել կու տայ մեզի, թէ եղած է ձեռագրատունը ի պահ մնացող օրագրութեան թիւ 3746 (1919-1921), թիւ 3747 (1922-1923), թիւ 3748 (1924), թիւ 3749 (1925-1927) տետրերէն դուրս ուրիշ մը (թերեւս ուրիշներ) եւս, 1917-էն սկսող: Այժմ դժբախտաբար անյայտ վայր մը գտնուող այդ օրագրութենէն փաղուած ըլլալու է նաեւ Գաբամանեանի տարեցոյցին մէջ 1921-ին հեղինակին իսկ կողմէ պատրաստուած «Երուսաղէմի գրաւումը» հրապարակումը:

²⁴ Վերջատրութեան «Շարունակելի» գրուած ըլլալով համդերձ, օրագրութեան հրատարակութիւնը այստեղ ընդհատուած է: